Ինձ ամենից շատ զարմանք էր պատճառում այդ իրերի չափազանց էժանութիւնը, որ բնաւ չէր համապատասխանում աշխատանքի մեծութեանը: Ու բոլորովին անհասկանալի էր թւում, թէ ինչպէս նրանք կարողանում են դիմանալ, երբ այդքան ցած են գնահատում իրանց աշխատանքը:

—Ասացէք խնդրեմ,— դարձայ ես վերջապէս իմ ծանօթ մի նաւապայի, որ մտազբաղ կանգնած էր այդ ընդհանուր շարժման մէջ.— ի՞նչն է ստիպում ճապոնացուն, որ այդպէս քիչ գնահատի իր աշխատանքը: Ի՞նչ է մնում նրան այս առուտուրից:

—Դուք մոռանում էք, ազնիւ օրիորդ,— առարկեց ինձ նաւապան մի մեղմ ժպիտով.— մոռանում էք, որ ճապոնացու կեանքը շատ է պարզ. ի՞նչին է հարկաւոր շատ ստանալը, երբ իր պէտքերն էլ ամենեւին բարդ չեն:

—Իսկն ասած, այդ իրերը աւելի չարժեն,— միջամտեց արհամարհոտ շեշտով մի նիհար ու մաղձոտ պարոն, որ կանգնած էր քիչ հեռուն.— դրանք այժմ գրաւում են ձեզ իրանց գեղեցիկ գոյներովն ու էժանութեամբը. միայն գիտէ՞ք, ի՜նչպէս շուտ են կոտրւում: Արդէն նրանց ոչ մի բանը դիմացկուն չէ: Ապա, որ ասում եմ, այս ժողովուրդը չափազանց անբարեխիղճ է:

—Ի՞նչպէս կարող էք այդպէս թեթեւ կերպով պախարակել մի ամբողջ ժողովուրդ,— տաքացաւ նաւապան.— կարո՞ղ էք ուրանալ, թէ այս իրերի վրա մեծ աշխատանք է դրւած, այն էլ ի՜նչ նստուկ, մանր ու յամառ աշխատանք: Ոչ, պարոն, ճապոնացու անբարեխղճութեան մասին խօսելն անգամ մեղք է: Դուք մեղադրում էք, որ նրանց շինածը յաւիտենական չէ: Բայց իզուր: Մենք, իբրեւ եւրոպացիք, ամենից առաջ տեւական ու դիմացկուն լինելու ետեւից ենք ընկնում,